

ՉԵՌՆՈՒՐԻԼԻ ԱՀԱԶԱՆԳԸ

1986 թ. ապրիլի 26-ին Չեռնոբիլի ատոմակայանում միջուկային շղթայական փոխակերպումները դարձան անվերահսկելի՝ տեխնիկական վթարն արագորեն աղետի վերածվեց: Ռադիոակտիվ արտանետումները տարածվեցին ոչ միայն Ուկրաինայում, այլև հարևան եվրոպական բազմաթիվ երկրներում: Աղետի բացասական հետևանքները մինչ այսօր էլ ազդեցիկ են ու շարունակելի՝ Ուկրաինայի, Բելառուսի, Ռուսաստանի որոշ մարզերի, եվրոպական շատ երկրների շրջակա միջավայրի, բնակչության, տնտեսության համար:

Գիտակից մարդկության համար Չեռնոբիլյան աղետը սարսափելի թանկարժեք ահազանգ է, առաջին հերթին և հատկապես՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համար: Չեռնոբիլից հինգ տարի անց ՀՀ կենսագործունեության անվտանգության համար պատասխանատու ղեկավարները սկսեցին հանգամ հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ), նաև Նաիրիտի վերագործարկման քայլերը՝ մոռանալով, անտեսելով Չեռնոբիլի դասերը, Թրի Մայլ Այլենդի, Բհոպալի, Արզամասի, աղետների պատճառներն ու հետևանքները:



Չեռնոբիլի ճառագայթման գոտու բնակավայրերը

Հողվածի նպատակն է հետաքրքրվող հանրությանը կրկին ներկայացնել ՀԱԷԿ-ի, նաև Նաիրիտի վերագործարկման առթիվ կայացված որոշումները, որոնց իրագործման հետևանքներն իրենք իրենց վրա մարդիկ գգում և կրում են մինչև այսօր: Ուստի հողվածը գրվել է օգտագործելով փաստերը, փաստաթղթերը և հողվածի հեղինակի հիշողություններն այն դեպքերի, միջոցառումների մասին, որոնց ականատեսը և մասնակիցն է եղել:

1990 թ. սկսված և մինչև այսօր շարունակվող ՀՀ շրջափակումը ժամանակի հեռվից ավելի պարզորոշ է ցուցադրում տնտեսության զարգացման ոչ միայն հակաէկոլոգիական բնույթը, այլև տնտեսագիտական տրամաբանությունից զուրկ լինելը: Հայաստանը երբեք խոշոր քիմիայի զարգացման պայմաններ չի ունեցել՝ բացակայում են հիմնական հումքի բազաները, առատ ու էժան էներգակիրները, տարածքը: Համենայն դեպս կոմունիստները Հայաստանում խոշոր քիմիական արդյունաբերություն են զարգացրել (умудрившись): Անտեսելով հսկայական տնտեսական վնասները անեզր ռուսական հեռաստաններից հազարավոր տոննաներով վնասակար նյութեր են փոխադրվել Հայաստան, որտեղ որպես կանոն՝ վտանգավոր բարդ տեխնոլոգիաներով <երկրի համար կարևոր> մի քանի նյութեր են արտադրվել և ուղարկվել այլ հեռաստաններ՝ ճանապարհները մշտապես ծանրաբեռնելով վտանգավոր նյութերի ահռելի քանակներով: Այս սկզբունքով է հիմնադրվել, նաև՝ զարգացել Նաիրիտ քլորոպրենային կաուչուկի արտադրությունը, որն իր հերթին նպաստել է այլ քիմիական ձեռնարկությունների հիմնադրմանն ու զարգացմանը:

Հայկական արդյունաբերության զարգացման համար հումքի ահռելի քանակներից բացի էներգետիկ լրացուցիչ հզորություններ են պահանջվել: Հիդրո- և ջերմային էլեկտրակայանները չեն բավարարել անտրամաբան տնտեսության էներգետիկ պահանջարկը և կառուցվել է հայկական ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷԿ)՝ հյուսիս-անատոլիական բեկվածքի վրա: Չարգացած սոցիալիզմի վերջին տասնամյակում (1980-1990թթ.) Հայաստանում տարեկան արտադրվել է միջինը 15 մլրդ.կՎտ.ժամ էլեկտրաէներգիա, որից 9 մլրդ-ը ՋԷԿ-երի, 1,5 մլրդ-ը ՀԷԿ-երի միջոցով, 4,5 մլրդ-ը՝ ՀԱԷԿ-ում (որի 0,5 մլրդ-ը արտակայանի սեփական սպառումն է): Թեև սեփական ներուժի ներդրումը կազմել է 11 %, ծրագրվել էր 1995 թ. երկրի էներգետիկ հզորությունը հասցնել 28 մլրդ.-ի: Անտեսվել է նույնիսկ այն հանգամանքը, որ նավթի, գազի, ածուխի և ուրանի համընդհանուր պաշարները նվազում են և դրանց արժեքը շարունակաբար բարձրանում է, ինչպես նաև՝ անտեսվել են էներգակիրների տեղափոխման բարդությունն ու դժվարությունները:

Ներքին բազմաթիվ հակասությունները և անտրամաբան <տնտեսական զարգացումը> հզոր ԽՍՀՄ-ի փլուզմանը հանգեցրին՝ կոմունիստական վերնախավն այլևս չկարողացավ ղեկավարել, իսկ ենթակա հանրապետությունները չցանկացան ղեկավարվել: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) վառելիքային-էներգետիկ համալիրը, որի զարգացումը հիմնավորվել էր քաղաքական տեսանկյունից՝ քաղաքական իրադրության փոփոխման հետևանքով կաթվածահար վիճակում էր: Իսկ սկսված բազմակողմանի շրջափակումները պարզապես ցուցադրեցին ոչ միայն էներգետիկ համալիրի, այլև՝ ՀՀ ամբողջ տնտեսության հիմնագուրկ, անողնաշար, հետևաբար՝ անկայուն ու անհեռանկար բնույթը:

Անհերքելի է, որ տնտեսապես ավելի ձեռնտու և հեշտ է կանխել վնասաբեր գործողությունները, քան՝ միջոցներ ծախսել դրանց հետևանքները վնասազերծելու, վերացնելու համար: Ուստի տնտեսական զարգացումները հարկ է պլանավորել առաջնահերթ կարևորելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի և մարդկանց ավտանգության խնդիրները: Հանրահայտ է նաև, որ միջուկային շղթայական փոխակերպումների միջոցով գործող օբյեկտները հարուստ են բազմատեսակ վտանգներով, վնասաբեր գործողություններով, հատկապես՝ սեյսմիկ ակտիվ գոտում կառուցված, առավել ևս՝ նախապատմություն ունեցող ու վերականգնման ենթակա ՀԱԷԿ-ը:

Մինչ ՀԱԷԿ-նախագծի հաստատումը՝ 1969 թ. Հայաստանի ճանաչված մտավորականները դիմեցին կոմկուսի կենտրոնի հիմնավորելով ատոմակայանի կառուցման անթույլատրելիությունն Արարատյան դաշտում և նշելով համեմատաբար ավելի հարմար վայր: Բայց անտեսելով մտահոգ մասնագետների հիմնավորումներն ու առաջարկները, որոշվեց ՀԱԷԿ-ը կառուցել հյուսիս-անատոլիական բեկվածքի

վրա՝ Արարատյան դաշտում, որտեղ կենտրոնացած են բնակչության գերակշիռ մասը, գիտական ու մշակութային ներուժը, արդյունաբերական և գյուղատնտեսական հիմնական համալիրները: ՀԱԷԿ-ի երկու էներգաբլոկներից առաջինը շահագործման է հանձնվել 1976 թ. դեկտեմբերի 29-ին, երկրորդը՝ 1980 թ. հունվարի 5-ին: Թողարկումից հետո, երբ վտանգները պարզվեցին՝ որոշակի ծրագրեր մշակվեցին, որոնք ՀԱԷԿ անվտանգությունն ամբողջովին չերաշխավորեցին:

1987 թ. ԽՍՀՄ-ում ընդունվեցին <Ատոմակայանների տեղակայման մասին> դրույթները, որոնց պահանջների համաձայն՝ ատոմակայանի գործունեությունը չպետք է հակասի հողի, ջրի, ընդերքի, մթնոլորտի, անտառի, կենդանական և բուսական աշխարհի պահպանության, առողջապահության նորմերին: Իսկ ՀԱԷԿ նախագծումն իրականացվել է 1960-ական թվերին, շինարարությունը սկսվել է 1969-ին՝ մինչ ատոմակայանների նախագծման, սարքավորման և շահագործման անվտանգության ապահովման ПБЯ-04-07 և ОПБ-82 ընդհանուր կանոնների գործողության մեջ մտնելը:

Մեյամիկ ակտիվ գոտում գտնվելու պատճառով ՀԱԷԿ-ի վտանգի աստիճանը բազմապատկվում է՝ երկրաշարժի հետևանքով բարձրանում է խողովակաշարերի վթարային խաթարումների, կաբելների այրման, հովաքման համակարգի խափանման հավանականությունը և դրանցով պայմանավորված վթարներն ու աղետները: 1982 թ. ՀԱԷԿ առաջին բլոկում գեներատորի պայթյունի հետևանքով այրվեց մեքենայական սրահը, անձնակազմի որոշ մասը խուճապահար հեռացան կայանից՝ ռեակտորը թողնելով առանց հսկողության: Կոլսկի ատոմակայանից ինքնաթիռով ժամանած մասնագետներն օգնեցին փրկել իրավիճակը: Ավելի ճիշտ՝ փրկել մեզ բոլորիս, հակառակ դեպքում Չեռնոբիլի աղետի փոխարեն մարդկությունը հայկական աղետ կստանար:

ՀԱԷԿ-ի փակման հիմնական փաստաթուղթը ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1988 թ. օգոստոսի 28-ի խորհրդակցության որոշումն է (արձանագրություն թիվ III-2885) – ***Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԷԿ էներգաբլոկները կառուցված են մինչ 1982 թ. գործող նորմերին համապատասխան, ինչպես նաև՝ սարքավորման և տեխնոլոգիական համակարգերի տեխնիկական վիճակը, համաձայնել ԽՍՀՄ Պետական ատոմային հսկողության, Ատոմային էներգետիկայի նախարարության և Մեքենաշինության նախարարության առաջարկներին՝ ՀԱԷԿ թիվ 1 և 2 էներգաբլոկների շահագործման աստիճանական դադարեցման մասին՝ համապատասխանաբար 1990 և 1991 թ.թ. ընթացքում:***

ՀԱԷԿ փակումը հիմնավորող փաստաթուղթ է նաև Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի թիվ 003-0200 դիմումը ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովին. – ***ՀԱԷԿ-ը գտնվում է խիստ բնակեցված սեյսմիկ շրջանում (8 բայ) Երևան քաղաքից 28 կմ և պետական սահմանից 16 կմ հեռավորության վրա: 50 կմ շառավղի գոտում բնակվում է մոտ 2 մլն. մարդ և կենտրոնացված է հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կեսից ավելին:*** Այդուհանդերձ ՀԱԷԿ աշխատանքի անվտանգությունն ապահովված չէ, և հետագա շահագործումը պոտենցիալ վտանգ է ներկայացնում (17 հոկտեմբեր, 1988 թ.):

1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը Չեռնոբիլի նախորդի համար Չեռնոբիլի կրկնություն էր ենթադրում, որը սակայն չկայացավ՝ Հայաստանի հյուսիսը ցնցող ալիքները որոշ չափով Արագածի լեռնազանգվածում մարվեցին: Բայց երկրաշարժն արագացրեց ՀԱԷԿ փակման գործընթացները: 1989 թ. հունվարի 6-ին ԽՍՀՄ նախարարների խորհուրդն ընդունեց թիվ 15 որոշումը. – ***Հաշվի առնելով Հայկական ԽՍՀ տարածքում երկրաշարժով պայմանավորված ընդհանուր սեյսմիկ իրադրությունը՝*** ընդունել Հայաստանի կոմկուսի կենտկոմի, նախարարների խորհրդի, ատոմային էներգետիկայի հարցերով միջգերատեսչական տեխնիկական խորհրդի առաջարկությունը ՀԱԷԿ իրադրության մասին

և նախատեսվածից ավելի վաղ կանգնեցնել առաջին էներգաբլոկը՝ 1989 թ. փետրվարի 25-ից և 2րդ էներգաբլոկը՝ 1989 թ. մայիսի 18-ից:

Նույն որոշման 4-րդ կետով հանձնարարվել է ԽՍՀՄ ատոմային էներգիայի և միջին մեքենաշինության նախարարություններին՝ 1989 թ. ընթացքում մշակել կազմակերպական-տեխնիկական լրացուցիչ միջոցառումներ ԽՍՀՄ Պետատոմհսկոդության մասնակցությամբ՝ **ՀԱԷԿ կանգառի աշխատանքների անվտանգության և շենքերի, շինությունների սեյսմակայունության բարձրացման համար**: Նաև նույն որոշման համաձայն՝ ՀԱԷԿ-ը վերակազմավորել որպես հիմնականում բնական գազով աշխատող ջերմային էլեկտրակայան:

Նշված որոշման հիմնական կատարումն ապահովել է ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը՝ տեղում անձամբ հետևելով ռեակտորների աշխատանքի դադարեցմանը և ՀԱԷԿ-ն անջատելով երկրի էներգետիկ համակարգից: Այդ աշխատանքներին հետաքրքրված հանրությունն օրեր շարունակ ուշադիր հետևում էր Հայաստանի հեռուստատեսության ուղիղ եթերների միջոցով:

Հարկ է նշել, որ մինչ ՀԱԷԿ-ի փակումը կանխվեց Արարատյան դաշտում ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցի շինարարությունը՝ ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի միջամտության շնորհիվ: Նախատեսվել էր Արարատյան արտեզյան ջրամբարի տակ՝ 800 մ խորության վրա գտնվող աղային նստվածքներում 30 հազար մ³ ծավալ ստեղծել՝ աղի ստորերկրյա լվացման միջոցով և ռադիոակտիվ թափոններն այնտեղ իջեցնել ջրատար շերտերում փորված հորատանցքով:

ՀԱԷԿ-ի փակման կարևորությունն ամրագրվեց նաև անկախ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Գերագույն խորհրդի (ԳԽ) կողմից՝ 1991 թ. ապրիլի 17-ին ընդունված թիվ 143 որոշմամբ. – **ՀԱԷԿ շահագործման կամ նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման մասին որոշում ընդունել միայն ՀՀ հանրաքվեի արդյունքում**: Որպես ականատես հարկ եմ համարում նշել, որ ԳԽ թիվ 143 որոշումն իշխանությանը պետք եկավ Նաիրիտ քլորոպրենային կաուչուկի արտադրության վերաբացման մասին որոշումը ԳԽ-ում ընդունելի դարձնելու համար (էներգետիկ ռեսուրսների ահռելի պահանջ, վնասակար ու վտանգավոր ռիսկերով հագեցած, անընդհատ քիմիական սինթեզի տեխնոլոգիայով աշխատող Նաիրիտի տնտեսական օգտակարության կեղծիքը լիարժեքորեն կյանքն ապացուցում է մինչ այսօր): Հարկ է ընդգծել նաև, որ **նույն այդ 1991 թ. ՀՀ արդեն տրանսպորտային լիակատար շրջափակման մեջ էր, ավերիչ երկրաշարժի, էներգետիկ ճգնաժամի ազդեցության և պատերազմական իրավիճակում**:

ՀՀ ԳԽ ապրիլյան որոշումներին հաջորդեցին նաև այլ ակտեր, այդ թվում՝ ՀՀ կառավարության թիվ 648 որոշումը 1991 թ. նոյեմբերի 22-ին. – Հաշվի առնելով, որ էներգետիկ հզորությունների արագ աճի միակ ելքը ՀԱԷԿ-ի վերագործարկումն է, ելնելով շահագործման տեխնիկատնտեսական հիմնավորումից, հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ Ատոմէներգոնախարարության, ամերիկյան Բեխել, ֆրանսիական Ֆրամատոմ կազմակերպությունների փորձաքննությունների արդյունքները, անմիջապես սկսել ՀԱԷԿ շահագործման նախապատրաստական աշխատանքները: Ներկայացնեմ ֆրանսիական Ֆրամատոմ-ի եզրակացությունը, որն ինքս եմ կարդացել. – **Ոչ մի կառավարություն իր վրա պատասխանատվություն չի վերցնի թույլատրելու շահագործել որևէ ատոմակայան այնպիսի վիճակում, որում հիմա Հայաստանի ատոմակայանն է**: Որքան հայտնի է՝ ԽՍՀՄ ատոմէներգոյի նախարարությունը ևս որևէ դրական արդյունք չի ներկայացրել ՀԱԷԿ-ի անվտանգության վերաբերյալ:

1992 թ հունվարին տեղի ունեցավ ՀՀ ԳԽ բնապահպանության հանձնաժողովի խորհրդակցությունը՝ հրավիրված բազմափորձ մասնագետների մասնակցությամբ, որն արձանագրեց. – **Երկրաբանության,**

երկրաշարժագիտության, հիդրոերկրաբանության տեսակետներից ՀԱԷԿ-ի գտնվելու վայրը սխալ է ընտրված և այդ տարածքում անթույլատրելի է ՀԱԷԿ շահագործումը, ռադիո-ակտիվ թափոնների թաղումը:

1992 թ. փետրվարին ՀՀ Գիտությունների ակադեմիան ընդունեց հետևյալ որոշումը. – ***Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԷԿ-ը գտնվում է խիստ բնակեցված 9 բալանոց գոնայում և ունի մի շարք անուղղելի, լուրջ թերություններ, որոնք կարող են ժողովրդին աղետի առաջ կանգնեցնել, ՀԱԷԿ վերագործարկումը նպատակահարմար չէ:***

1993 թ. մարտի 18-ին ՀՀ պառլամենտը չեղյալ համարեց 1991 թ. ապրիլի 17-ին իր իսկ ընդունած թիվ 143 որոշումը՝ միայն ՀՀ հանրաքվեի արդյունքում որոշում ընդունելու մասին և դրանով օրինականացրեց ՀԱԷԿ վերագործարկմանն ուղղված կառավարության գործողությունները: Հարկ է նշել, որ այդ առթիվ ՀՀ կառավարության ներկայացրած տեղեկանքում նշված էր ՀԱԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ցածր արժեքի (1,5 – 2 անգամ) և այլ <անփոխարինելի առավելությունների> մասին, ընդգծելով նաև, որ ***միջոցառումների շնորհիվ ԱԷԿ անվտանգության մակարդակը կդառնա նախագծայինից բարձր, սակայն ամբողջովին չի ապահովի համապատասխանությունը գործող նորմերին և կանոններին:*** ՀԱԷԿ նախագծային որոշումը թույլ չի տալիս տեղադրել գմբեթը, ապահովել անվտանգության համակարգի վթարային հովաքման անկախությունը, վթարների տեղային վնասագերծման լիարժեքությունը:

Այնուհանդերձ շարունակելով ՀԱԷԿ-ի վերագործարկմանն ուղղված ջանքերը, ՀՀ կառավարությունը զանազան որոշումներ ու միջպետական պայմանագրեր էր նախապատրաստում՝ իլացած անտեսելով հանրային բացասական տրամադրությունները, մասնագետների ողջամիտ հիմնավորումները: ՀԱԷԿ-ի վերագործարկմանն ուղղված վարկային պայմանագրերը լուրջ պայմաններում կայացան: Տարիներ հետո ՀՀ Կենտրոնական Բանկի միջազգային և արժույթային գործառնական վարչության պատրաստած <Տեղեկություններ Ռուսաստանից ստացված 110 մլրդ. ռուբլի վարկի իրացման ընթացքի մասին> (ձև N 07.03.02-80, 26.10.1995թ.) փաստաթուղթը պարզում է, որ Ռուսաստանի ատոմային էներգետիկայի և մեքենաշինության ձեռնարկությունները՝ ՀԱԷԿ-ի վերագործարկման նպատակով սարքավումներ, սարքեր են մատակարարել վարկային ֆինանսավորման շրջանակներում:

Իսկ այդ ամբողջ ընթացքում՝ հատկապես 1991-1995 թվականներին շրջափակված Հայաստանում ձեռները սովորականից ավելի խիստ էին, և էներգակիրների բացակայությամբ սառնամանիքն առավել ազդեցիկ էր բնակչության համար: Տնտեսության համար՝ նույնպես: Վիճակագրությունը ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին փաստում է, որ համախառն ներքին արդյունքի ամենացածր մակարդակը գրանցվել է 1994-ին: Այնուամենայնիվ մեր ժողովուրդն դիմակայում էր ջեռուցման, գազի, էլեկտրաէներգիայի բացակայությամբ հարուցված խնդիրներին՝ հանուն անկախության: Բնակչության կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան ապահովվում էր Սևանա լճի ջրերի, մասամբ անտառային տարածքների, քաղաքների արհեստական տնկարկների հաշվին: 1993-1995 թ.թ. ՀՀ կառավարությունը Սևանա լճից 4,2 մլրդ մ³ ջուր է վերցրել, որը համարժեք է 3,5-ով լճի մակարդակի իջեցմանը: Իսկ լեռնային անտառների հատումները մինչ օրս էլ շարունակվում են: Հատկապես հարկ է ընդգծել, որ Երևանի կանաչ տարածքների ավելի շատ կորուստներ են գրանցվել հատկապես՝ 1998-ից հետո ծավալված <օրինական> շինարարության պատճառով (ինչը հնարավոր է ապացուցել հեկտարներով և քառակուսի մետրի ճշտությամբ):

ՀԱԷԿ-ի վերագործարկմանը դեմ լինելով՝ բազմաթիվ մասնագետներ այդ նույն ժամանակ էներգետիկ խնդիրները հաղթահարելու, երկիրը ճգնաժամից դուրս բերելու համեմատաբար ավելի անվնաս

ծրագրեր ու միջոցառումներ են առաջարկել բազմաթիվ քննարկումների ընթացքում: Ընդհանրացնելով այդ առաջարկները՝ կարելի է արձանագրել. – ***Վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման էներգետիկ քաղաքականություն վարելով և այն աստիճանաբար ընդլայնելով՝ հնարավոր է էներգետիկ համալիրը դարձնել ավելի ճկուն ու կենսունակ***, որի շնորհիվ աստիճանաբար կնվազի արտաքին էներգակիրների պահանջարկը, հետևաբար՝ զգալի կնվազի արտաքին քաղաքական պարտադրանքը: Նշված քաղաքականության առավելություններն են՝

1/ օգտագործելով էներգիայի տեղական վերկանգնվող աղբյուրներ,

2/ օգտագործվում են էկոլոգիապես համեմատաբար <անվնաս> տեխնոլոգիաներ,

3/ ստեղծվում են ապակենտրոնացված և ավելի հուսալի էներգամատակարարման համակարգեր՝ ավելի նվազ ցանցային կորուստներով,

4/ ապահովելով բազմաթիվ էներգետիկ ընկերությունների մրցակցությունը և էներգիայի ցածր գինը,

5/ որը երկրի տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից է:

Այս ամենի հիմնավորումները արևի, ջրային, քամու և այլ էներգետիկ ռեսուրսների օգտագործման վերաբերյալ՝ բավական սթափ հաշվարկներով ՀՀ Կանաչների միության կողմից ներկայացվել են ԱԶԳ թերթի 18.03.1992 թ. համարում: Սակայն ցանկացած սթափ հիմնավորում երկարատև քար լուծյան էր ենթարկվում: ՀԱԷԿ-ի վերագործարկման գաղափարն իշխանական շրջաններում այնքան տիրապետող էր, որ ցրտի, խավարի ազդեցությանը ենթակա բնակչությանը հեռուստատեսությունը և մամուլը ներկայացնում էին մեծ մասամբ պաշտոնական տեսակետը՝ ՀԱԷԿ <անվտանգության>, <ամենաեժան էներգիայի>, նույնիսկ՝ <ստրատեգիական գենքի> հնարավորության մասին: Ձևավորվեցին նոր և կեղծ առաջնահերթություններ, նույնիսկ՝ կադրային քաղաքականությունում: Օրինակ՝ որևէ կարևոր պաշտոնում որևէ մեկին նշանակելու համար հաշվի էր առնվում ոչ թե մասնագիտական փորձը, այլ՝ ՀԱԷԿ-ի կամ Նաիրիտի վերագործակմանը կողմ լինելը: Հայաստանում միջուկային էներգետիկական զարգացնելու կողմնակիցները գաղափար չունենալով ուրանի հանույթի, ջերմանջատիչ տարրերի արտադրության, ռադիոակտիվ թափոնների վնասազերծման խնդիրների մասին, վկայակոչում էին արտասահմանյան փորձը որպես հիմնավորում, մոռանալով սակայն 1986 թ. Չեռնոբիլյան աղետի երկարատև վնասների մասին:

Տարիներ հետո 2011-ին վթարներ տեղի ունեցան Ֆուկուսիմայի ատոմային էլեկտրակայանում, որն անվտանգության բազմաթիվ մակարդակներ ուներ: Բայց 10 մ բարձրության ցունամին խափանեց հովացման համակարգը սնուցող պոմպերի էներգամատակարարումը և ռեակտորներում միջուկային ռեակցիան դարձավ անկառավարելի, ռադիոակտիվ հոսքեր առաջացան՝ սպառնալով օվկիանոսի աղտոտմանը: Հազարավոր մարդկային զոհեր եղան, շատերը հաշմանդամ դարձան, բազմահազար մարդիկ տարհանվեցին, ..., նախօրոք ռիսկերի կանխարգելման հիմնավորման, ատոմակայանի անվտանգության երաշխավորման դեպքում: Իսկապես իրավացի լինելու համար հարկ է ընդգծել, որ ամենաբարդ տեխնոլոգիաների դեպքում էլ ճապոնացիներն արտակարգ իրավիճակների ռիսկերի կանխարգելման բարձր զարգացած մշակույթ ունեն: Իսկ Ֆուկուսիմայի վթարների վնասազերծման փորձը վկայում է արտակարգ իրավիճակների կառավարման ճապոնացիների փորձի և նրանց պատասխանատվության բարձր մակարդակի մասին: Միջազգային փորձի օրինակ է նաև այն, որ Ֆուկուսիմայի աղետի պատճառով Գերմանիայի կառավարությունը դադարեցրեց ատոմակայանների

մեծ մասի աշխատանքը: Այլ տեսակի միջազգային փորձի օրինակ են տնտեսական քաղաքականության առանցքային հետևյալ սկզբունքներն ԱՄՆ-ում.

- Այն ինչ բնապահպան կորուստ է առաջացնում, հանգեցնում է նաև տնտեսական կորուստների:
- Լավ են կառավարվում այն ֆիրմաները, որոնք էկոլոգիական լավ գործունեություն ունեն:

Ինքնաբերաբար հարցեր են ծագում – իսկ մենք հայերս ինչ կարողություններ ունենք ? Չեռնոբիլի ահազանգը չլսեցինք, իսկ ինչ դասեր քաղեցինք Ֆուկուսիմայի փորձից ? Որքանով են հիմնավորված ՀԱԷԿ վտանգներն ու ռիսկերի կանխարգելումը: Արդյոք լավ են կառավարվում մեր տնտեսական ընկերությունները ? և կարող են արդյոք (եթե ցանկություն ունեն) ամերիկացիների նման էկոլոգիական գործունեություն ծավալել ? Միջազգային փորձն էլ մի կողմ դնենք ու միասին ազնվորեն հաշվենք՝

1/ ինչ ծախսեր են կատարվել ՀԱԷԿ-ի, Նաիրիտի վերագործարկման վրա և աշխատանքի ընթացքում ?

2/ ինչ օգուտներ են ստացվել և ինչ վնասներ են գրանցվել այդ ծախսերի արդյունքում ?

3/ հաշվի առնենք նաև՝ ՀԱԷԿ-ի տարեկան կանգառների ծախսերը՝ վերանորոգման համար, Նաիրիտի հարկադիր դադարները նույնպես

4/ և համեմատենք բոլոր ծախսերը, օգուտներն ու վնասները (չմոռանանք մարդկանց առողջությանը պատճառված վնասները նաև):

Ինչ կստացվի ? Կստացվի այն, ինչ որ արդեն ստացվել է: Ահռելի միջոցներ, թանկարժեք ժամանակ ու ջանքեր ծախսվեցին ոչ միայն հանգած ատոմակայանի վերագործարկման, այլև հանգուցյալ Նաիրիտի վերակենդանացման համար՝ ***երկրի քաղաքական անկախության ամրապնդման, համեմատաբար անվնաս, եկամտաբեր ու ինքնարավ տնտեսության փոխարեն:*** Умудрились գերազանցել կոմունիստ նախորդներին: Չէ որ նշված հաշվարկները պարտադիր են և ցանկացած գործունեության տրամաբանական հիմքն են:

Մենք ժառանգել ենք փոքր լեռնային երկիր, որը սակավահող է, սակավանտառ է, որտեղ բնագոյացման գործոնները նվազ են, քայքայման գործոնները բազմաթիվ ու հզոր են: Այս երկրում լավ կաշխատի այն տնտեսական քաղաքականությունը, որի հիմքում բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի և մարդու անվտանգության նորմերն են գործում, որը մշակվել է հաշվի առնելով բազմափորձ մասնագետների հիմնավորումներն ու առաջարկները, բնակչության տարբեր խավերի կարիքները, որի շնորհիվ էլ այդ քաղաքականությունը հանրային լայն հանրային աջակցություն կվայելի, հետևաբար՝ հաջողությամբ կիրագործվի (գուցե տեղին է հիշել՝ քանի-քանի կառավարական նախաձեռնություններ հանրային հզոր դիմադրության են հանդիպել ?):

Սրբուհի Հարությունյան

Էկո-փորձաքննության խորհրդատու

2018 թ. ապրիլի 26.

Սկզբնաղբյուրներ

1. RADIATION Doses, Effectes, Risks – UN Environment Programme ՄԱԿ-ի Ատոմային ճառագայթման գիտական կոմիտեի 30 տարվա ընթացքում հավաքած նյութերի ժողովածու, 1986թ.
2. Հայկական ատոմակայան. 25 տարի առաջ - <Արտակարգ թերթ> շաբաթաթերթ, 2007թ. թիվ 15 և թիվ 16 համարներ
3. Անվտանգության պահանջարկ – Ս.Հարությունյան, 07.4.2015թ. http://aarhus.am/?page_id=9132
4. Շղթայական փոխակերպումների քաղաքականություն - Շրջակա միջավայր և օրենք պարբերական, թիվ 4, 1998 թ.
5. ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ՀՀ օրենսդրության 1987-1999 թ.թ. պաշտոնական տեղեկագրեր
6. Nuclear Power, Human Health and the Environment – A Greenpeace Report, 1995
7. Nuclear reactor accidents in the United States - https://en.wikipedia.org/wiki/Nuclear_reactor_accidents_in_the_United_States